ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՄԵԾԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016թթ.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՄԵԾԱՎԱՆ -2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Էջ
1.	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ	3
2.	ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	4
3.	ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	6
4.	ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ	6
5.	ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	8
	ԱՂՅՈՒՍԱԿ 1.	9
	ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	10
	ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	11

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1	Բնակչությունը	6843 մարդ
2	Ընտանիքների քանակը	1728
3	Արական սեռ	3418
4	Իգական սեռ	3425
5	Աշխատունակ բնակչություն	2921
6	Անչափահաս բնակչություն	2264
7	Կենսաթոշակառուներ	964
8	Հաշմանդամներ	243
9	Դպրոցներ	2 (578 աշակերտ)
10	Մանկապարտեզ	1 (40 երեխա)
11	Մշակույթի տուն	1 (580 տեղ)
12	Գրադարաններ	
13	Արվեստի դպրոց	1
14	Կապի բաժանմունք	1
15	Ավտոմատ հոռախոսակայան	1(1000 համար)
16	Առողջապահության կենտրոն	1(50 մահճակալ)
17	« ՄԵԳԵՐՅԱՆ ԿԱՐՊԵՏ» ՓԲԸ	
18		
19	Համայնքի ընդհանուր տարածքը	6950 հա
20	Գյուղատնտեսական նշանակության հողեր	5545 հա
21	Վարելահողեր	1802 հա
22	Խոտհարք	1999 հա
23	Արոտավայրեր	1590 հա
24	Մեկուսանաշնորհված հողեր	2737 հա
25	Պահուստային հողեր	169 հա
26	Այլ անօգտագործելի հողեր	153 հա
27	Տնամերձ հողեր	258 հա
28	Խոշոր եղջերավոր անասուններ	1490
29	որից կովեր	860
30	Մանր եղջերավոր անասուններ	796
31	որից ոչխարներ	410
32	Տրակտորներ՝	
	ա) թրթուրավոր	0
	բ) անիվավոր	2
33	Կոմբայներ՝	2
34	Բեռնատար ավտոմեքենաներ	20
35	Խոտհնձիչներ	21
36	Գութաններ	3
37	Ճարթացաններ	2
38	Կարտոֆիլացան մեքենաներ	0
39	Կարտոֆիլահան մեքենաներ	0
40	Սրսկիչներ	2

Տարեկան միջին ջերմաստիճան	+5,7° C - +6,5° C
Առավելագույն ջերմաստիճան	+32 ° C
Նվազագույն ջերմաստիճան	-30 ° C
Տարեկան տեղումների քանակը	680-700մմ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պատմական ակնարկ

Լոռու մարզի Մեծավան գյուղը հիմնադրվել է 1820 թվականին Ալաշկերտի տարածքի Երեցգյուղ (Իրցու գեղ), Խաստուր, Նավիկ, Շահնազար և շրջակա այլ գյուղերից գաղթած բնակչության կողմից: Մինչև 1978 թվականը գյուղը կոչվել է Շահնազար, այնուհետև վերանվանվել է Մեծավան: Գյուղի տարածքը եղել է հին բնակատեղի: Մինչև այժմ էլ կան երկու միանավ եկեղեցիներ (5-րդ և 10-րդ դ.դ.):

Աշխարհագրական դիրքը

Համայնքը գտնվում է Լոռվա սարահարթի հյուսիսային մասում և սահմանակից է իր հողերով՝ Վրաստանին: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1500-1750մ: Գյուղը բարեկարգ է ու գեղեցիկ : Երեք կողմերից շրջապատված է սարերով , իսկ առջևում Լոռվա սարահարթն է:

Տեղական ինքնակառավարման մարմինները

Համայնքի ղեկավարը ձևավորել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով (տես հավելված 1). գյուղապետի տեղակալ,համայնքի ղեկավարի օգնական, աշխատակազմի քարտուղար, առաջատար մասնագետներ/4/, առաջին կարգի մասնագետներ/2/,երկրորդ կարգի մասնագետներ/2/:

Համայնքի ավագանին բաղկացած է 11 հոգուց:

Համայնքի սեփականության գույքը սահմանված է կառավարության որոշմամբ և բերված է հավելված2-ում:

Տնտեսություն

Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է և հողագործությունը, որոնց համար կան նպաստավոր պայմաններ: Տարեկան միջին հաշվով արտադրվում է մոտ 900տոննա կարտոֆիլ, 1800-2000 տոննա կաթ, 250-300 տոննա հացահատիկ, 1.5-2.0 տոննա միս :

Բնակչությունը նվիրված է իր գյուղին, հարգում ու պահպանում է ազգային ավանդույթները: Բնակչությունը ապահովված է բարեկեցիկ ժամանակակից բնակարաններով և օժանդակ հարմարություններով: Բոլորի տնամերձ հողամասում կան պտղատու ծառեր: Այս բոլորը Մեծավանը դարձնում է հանրապետության լավագույն գյուղերից մեկը:

Բավականին լավ են բնակչության փոխհարաբերությունները ինչպես միմյանց,այնպես էլ գյուղապետարանի հետ: Բնակչությունը ըմբռնումով է մոտենում համայնքային հարցերի լուծմանը: Համայնքն ունի մոտ 300 բարձրագույն կրթությամբ մասնագետներ, որոնք զգալի աջակցություն են գույց տալիս համայնքին:

Գյուղատնտեսական մթերքների զգալի բանակության արտադրությունը ,մեծ աշխատուժը, մտավոր պոտենցիալը այն մտավոր գործոններն են, որոնց միջոցով համայնքը կարող է լավատեսորեն նայել ապագային:

Համայնքի համար առաջին հերթին վտանգ ներկայացնող աշխատուժի արտագաղթն է: արտերկրներ, որը հետևանք է աշխատատեղերի պակասի: Տարեկան գյուղից հեռանում են մոտ 1000-1300 հոգի (ժամանակավորապես), որի հետևանքով ծնունդը նվազում է , իսկ դրա հետևանքը բնակչության ծերացումն է: Այս երևույթի դեմն առնելու , ինչպես նաև մյուս պրոբլեմների հաղթահարման համար հիմնականը աշխատատեղերի ստեղծումն է : Մյուս կարևոր գործոնը գյուղատնտեսության և անասնապահության շահութաբերության բարձրացումն է և արտադրանքի իրացումը: Այս կարևորագույն խնդիրները իրենց մեջ են ներառում նաև ենթահարցեր, որոնց լուծումով համայնքը զգալի առաջընթաց կապրի:

Անասնապահության բնագավառում կարևորագույն գործոնը շահութաբերության բարձրացումն է: Այդ նպատակով հարկավոր է տանել անասունների տոհմային բարելավման աշխատանք, քանի որ «Կովկասյան գորշ» ցեղատեսակը սելեկցիոն աշխատանքի բացակայության պայմաններում արդեն իրեն սպառել է: Հարկավոր է համայնք ներմուծել կաթնամսատու մեկ այլ ցեղատեսակ, որը մեր բնական պայմաններին կհամապատասխանի (շվից, սիմենթալ և այլն):_ Այս հարցի լուծումը նույնպես կապված է կառավարության հետ, որին մենք պետք է հասնենք:

Կարտոֆիլագործության բնագավառում պետք է ներմուծել ավելի բերքատու սորտեր: Եթե այժմ մեր պայմաններում կարտոֆիլի միջին բերքը մեկ հեկտարից կազմում է 50-100գ, ապա նոր սերմատեսակի ներմուծմամբ այն կարելի է հասցնել 250-300ցենտների:

Վարելահողերի մեծ մասերի անբերրիության պատճառով ցանկատարածությունների 70-80%-ի վրա ցանքաշրջանառություն չի կատարվում: Պահուստային հողերի, ինչպես նաև հանքային պարարտանյութերի և գոմաղբի օգտագործման դեպքում կարելի է հասնել բերքատվության բարձրացման: Իր բացասական ազդեցությունն է թողնում նաև գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի բացակայությունը:

Հաջորդ պրոբլեմը գյուղատնտեսական և անասնապահական մթերքների իրականացումն է: Արտադրվում է կարտոֆիլ, բայց իրացման բացակայության պատճառով այն նվազում է տարեցտարի:

Մեծավանի նման մեծ համայնքում կարևոր է վերագործարկել կաթի վերամշակման ձեռնարկությունը, որը բնակչության ընտանեկան զամբյուղին լրացուցիչ միջոցներ կավելացնի, բույլ կտա նրանց, բացի իրենց հոգսերը հոգալուց, նաև ժամանակին մուծել հարկերն ու տուրքերը: Բացի այդ, կստեղծվի 5-8 աշխատատեղ:

Վարձակալական հողերի օգտագործմամբ տարեկան կարելի է ստեղծել մոտ 100 աշխատատեղ:

Հանրապետության ամենամեծ գյուղերից մեկը մինչև այժմ չունի իրեն արժանի շուկա: Նոր շուկայի կառուցումով (նախատեսվում է) հնարավորություն կլինի բնակչությանը առևտրական նորմալ ծառայություն մատուցել: Բնակչությունը հնարավորություն կունենա և գնել, և վաճառել:

Համայնքի կոլտուր-մասսայական միջոցառումների, ինչպես նաև սպորտով զբաղվելու և հանգստի կազմակերպման համար կարևոր է մարզահրապարակի կառուցումը:

Համայնքը ավելի գեղոցիկ դարձնելու նպատակով հարկավոր է յուրաքանչյուր տարում իրականացնել մոտ 5-8կմ ընդհանուր երկարությամբ փողոցներ:

Համայնքի ուժեղ կողմերը և բարենպաստ փոփոխությունները

- Գյուղատնտեսական նշանակության և պահուստային հողերի առկայությունը
- Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը
- Միջպետական մայրուղուն մոտ գտնվելը(մոտ 10կմ հեռավորությունը)
- Անասնապահության զարգացման մակարդակը
- Մշակութային օբյեկտների առկայությունը

Համայնքի թույլ կողմերը և վտանգ սպառնացող փոփոխությունները

- Բնակչության անվճարունակությունը
- Սոցիալական ծանր վիճակը
- Գործազրկության բարձր մակարդակը
- Աշխատունակ բնակչության արտահոսքը այլ երկրներ
- Բնակլիմայական վատ պայմանները
- Ջրահեռացման ներքին ցանցի բացակայությունը
- Արոտավայրերի էռոզիայի բարձր մակարդակը
- Կապը
- Ճանապարհները

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ա. Հասնել այն բանին, որ Մեծավանի աշխատունակ բնակչության մեծամասնությունը ունենա աշխատանք: Չորս տարվա ընթացքում համայնքում ստեղծել 200-250 աշխատատեղ:

Բ. Հասնել նրան, որ համայնքի բնակչությունը կարողանա իրացնել արտադրած անասնաբուծական և գյուղատնտեսական մթերքները:

Գ. Բարձրացնել անասնաբուծության և գյուղատնտեսության շահութաբերությունը:

Դ. Հասնել նրան, որ յուրաքանչյուր բնակիչ օրական ստանա 150լ. խմելու ջուր:

Ե. Մեծավանը դարձնել բարեկարգ, մաքուր և օրինակելի բնակավայր:

Զ. Հասնել նրան, որ համայնքի բնակչությունը իր հանգիստը կարողանա անցկացնել՝ մշակութային և մարզական միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելով:

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Աշխատանքների ստեղծում

Ենթածրագիր 1
Գյուղատնտեսական նշանակության հողերի հանձնում բնակչությանը՝ վարձակալական հիմունքներով

Նպատակ
Համայնքի ենթակայության գյուղատնտեսական հողերը վարձակալության տալու միջոցով լրացուցիչ ստեղծել տարեկան 50 աշխատատեղ:

Խնդիր 1
Մինչև 2013 թ. մայիսի 31-ը վարձակալական պայմանագրեր կնքել համայնքի ենթակայության 40 հա հողատարածքների համար:

Պատասխանատու՝ գյուղապետարան

Խնդիր 2

Հողատարածքների վարձակալության տալու միջոցով 2013 թվականից սկսած յուրաքանչյուր տարի ստեղծել 10-20 աշխատատեղ:

ԾՐԱԳԻՐ 1

Բարձր բերքատվության կարտոֆիլի արտադրության կազմակերպում

Նպատակ

Գյուղատնտեսական մթերքների արտադրության շահութաբերության բարձրացման համար կարտոֆիլի բերքատվությունը մեկ հա-ի հաշվով հասցնել 180-200 ցենտների:

Խնդիր 1

Գյուղատնտեսության նախարարության, մարզպետարանի և գյուղապետարանի համատեղ ջանքերով մինչև 2013թ. ապրիլի 1-ը համայնք ներկրել 20 տոննա բարձր բերքատու կարտոֆիլի սերմացու:

Խնդիր 2

Մինչև 2013 թ. հունիսի 1-ը ձեռք բերել 20տ հանքային պարարտանյութ և 500կգ թունաքիմիկատ:

Պատասխանատու՝ գյուղապետարան

ԾՐԱԳԻՐ 2

Գյուղատնտեսական մթերքների իրացման շուկայի կառուցում

Նպատակը

Թերեւացնել բնակչության արտադրած գյուղատնտեսական մթերքների իրացման հոգսը:

Խնդիր 1

Մինչև 2013 թ. հուլիսի 1-ը կազմակերպել շուկայի շինարարական աշխատանքները:

Պատասխանատու՝ գյուղապետարան

Խնդիր 2

Մինչև 2014թ. սեպտեմբերի 1-ը ստեղծել գյուղապետարանին ենթակա ՓԲԸ իրացման շուկայի շահագործման համար:

Պատասխանատու՝ գյուղապետարան

ԾՐԱԳԻՐ 3

Նպատակը

Համայնքի յուրաքանչյուր բնակչին ապահովել օրական 150 լ խմելու ջրով:

Խնդիր1

Մինչև 2014 թ. հուլիսի 1-ը ձեռք բերել 4-5 կմ երկարությամբ 100մմ ոց խողովակ՝ ջրային ներքին ցանցի կապիտալ վերանորոգման աշխատանքները կազմակերպելու համար:

Պատասխանատու՝ գյուղապետարան

Խնդիր2

Մինչև 2014թ. սեպտեմբերի 1-ը կապիտալ վերանորոգել ներքին ջրային ցանցի 10կմ հատվածը:

Պատասխանատու՝ գյուղապետարան

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Առաջիկա չորս տարիներին այս բնագավառում նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները.

- Վերանորոգել համայնքի մսուր մանկապարտեզի շենքը:
- Վերականգնել և լիարժեք շահագործման հանձնել գյուղի մշակույթի տունը:
- Կառուցել մարզահրապարակ՝ սպորտային միջոցառումները (ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ և այլն) կազմակերպելու համար:
- Վերանորոգել արվեստի դպրոցը, երաժշտական դպրոցին ապահովել համապատասխան գործիքներով, սովորող երեխաների քանակը հասցնել 100-ի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Գյուղապետարանում ստեղծել սոցիալական հիմնադրամ՝ բարեգործական աշխատանքներ իրականացնելու նպատակով, նեցուկ կանգնել համայնքի սոցիալապես անապահով խավերին, կազմակերպել նյութական, բնային կամ դրամական օգնություն կարիքավոր բնակչությանը:

5.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի ֆինանսական միջոցների 2009-2012 թ.թ. գնահատումը և 2013-2016 թ.թ. կանխատեսումը բերված աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԸ 2009-2012թ.թ. ԵՎ 2013-2016թ.թ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

հազար դրամ

N	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2009-2012թթ. փաստացի	2013թ. կանխատեսվում է	2014թ. կանխատեսվում է	201թ. կանխատեսվում է	2016թ. կանխատեսվում է
1.	Պահուստային ֆոնդ	48.249.18	6684.5	7200.0	7000.0	7000.0
2.	Գույքահարկ	18.251.11	4546.6	4200.0	4200.0	4500.0
3.	Հողի հարկ	35.103.31	8103.9	8100.0	8000.0	7500.0
4.	Ոչ գյուղ. նշան. հողի հարկ	95.23	23.8	25.0	25.0	25.0
5.	Այլ ոչ հարկային եկամուտներ	436.9	110.2	110.0	110.0	110.0
6.	Հողի վարձավճար	2.455.0	352.8	400.0	400.0	400.0
7.	Դոտացիա	218.827	68406.1	68400.0	68400.0	68400.0
8.	Տեղական տուրք	1.820.9	250.0	250.0	250.0	250.0
9.	Հողի օտարումից	514.81	0	0	0	0
10.	Ծնողական մուտքեր	1.379.9	300.0	300.0	300.0	300.0
11.	Այլ աղբյ. ստաց. սուբսիդացիա	465.00	80.0	60.0	60.0	60.0
12.	Ընդամենը եկամուտներ	327.598.34	88723.9	88910.0	88610.0	88410.0

Հավելված 1

ՍԵՃԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՆ



ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Նկատի ունենալով, որ համայնքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված աշխատանքները հիմնականում կախված են բյուջեի կատարումից, ապա սկզբնական փուլը պետք է հանդիսանա բյուջեի կատարման ապահովումը: Մյուս գործոնը հովանավորներ գտնելն է: Այս երկուսի զուգակցումով, կազմակերպված և քրտնաջան աշխատանք կատարելով կարելի է հասնել համայնքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:

Քառամյա ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքի տարեկան բյուջեների և սոցիալ տնտեսական զարգացման տարեկան ծրագրերի կազմման համար:

Մեծավան համայնքի ղեկավար՝ Ս. Վարդանյան

ՄԵԾԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 072 0416